ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	**Առաջարկի անվանումը**	*Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)*	**Առաջարկի կարգավիճակը** • *Ընդունվել է* • *Մերժվել է*	**Մերժման դեպքում՝ հիմնավորումը**
1.	**Սուսեր բնակավայրում խաղահրապարակի կառուցում**	*Սուսեր բնակավայրի վարչական տարածքում 1-ին փողոց 27/5 հասցեում, առաջարկում ենք կառուցել խաղահրապարակ՝ նախակրթարանի սաների պարապմունքներըբ արդյունավետ, հետաքրկիր և առողջարար դարձնելու նպատակով: Յանկալի է՝ տարածքը ցանկապատել, կանաչապատել և տեղադրել համապատասխան խաղային պարագաներ:*	*Ընդունվել է*	
2.	**Խաղահրապարակի կառուցում Կաթնաղբյուր բնակավայրում՝ երեխաների ժամանցն ապահովելու համար**	*Կաթնաղբյուր գյուղի բնակչության, հատկապես երեխաների և երիտասարդների համար ժամանցային ենթակառուցվածքների բացակայությունը խոչընդոտում է ակտիվ և առողջ կենսակերպի խթանմանը: Երեխաների համար անվտանգ և հետաքրքիր ժամանցի վայրի բացակայությունը սահմանափակում է նրանց ակտիվության և սոցիալականացման հնարավորությունները: Միհրան Ասատրյանի անվան այգու տարածքը ներկայումս չի օգտագործվում նպատակային ձևով և չի ծառայում որպես բնակավայրի համար օգտակար վայր: Անվտանգ և հարմարավետ խաղային միջավայրի բացակայությունը նվազեցնում է երեխաների ակտիվ կենսակերպի և ֆիզիկական զարգացման հնարավորությունները: Բնակավայրի բնակիչների համար չկան ընդհանուր տարածքներ, որոնք կարող են նպաստել փոխհարաբերությունների ամրապնդմանը և համայնքային կյանքի ակտիվացմանը: Այս ծրագրի նպատակն է Միհրան Ասատրյանի անվան այգու տարածքում*	*Ընդունվել է*	

		ժամանակակից, անվտանգ խաղահրապարակ կառուցելը, որը կդառնա բնակիչների կյանքի աշխուժացման կենտրոն: Խաղահրապարակը թույլ կտա երեխաներին ժամանցն անցկացնել որակյալ և անվտանգ պայմաններում: Այն կնպաստի երեխաների և երիտասարդների ֆիզիկական ակտիվության մակարդակի բարձրացմանը: Ծրագիրը կստեղծի բնակիչների, երիտասարդների, երեխաների համար ապահով և գրավիչ միջավայր՝ ակտիվ ժամանցի և սոցիալական շփման համար:		
3	**Կանաչ պուրակ**	*Հարգելի ՏԻՄ անդամներ. Արագածոտնի մարզում գործող ''Կայուն սոցիալ-տնտեսական զարգացում և կրթություն Լաբ'' հասարակական կազմակերպության անունից ցանկանում ենք ներկայացնել մեր առաջարկը և հուսով ենք, որ կաջակցեք իրականացնել այն: Մենք ցանկանում ենք ներկայացնել մի կարևոր խնդիր, որն առկա է Թալին քաղաքում և խնդրում ենք հաշվի առնել մեր համայնքում մի նոր պուրակ կառուցելու մեր առաջարկը: Թալին քաղաքի Մյասնիկյան փողոցը և հարակից տարածքները բավականին խիտ են բնակեցված, սակայն տարածքում չկա ապահով տարածք, որտեղ երեխաները կարող են անվտանգ խաղալ և զարգանալ, իսկ մեծահասակները՝ անցկացնել իրենց ժամանցը: Կարևոր է նշել, որ չնայած Թալին քաղաքում վերջին շրջանում բարեկարգվել և կառուցվել են պուրակներ և խաղահրապարակներ, սակայն դրանք բավականին հեռու են գտնվում նշված տարածքից, և երեխաները ստիպված են խաղալ բաց տարածքներում, ինչպիսիք են փողոցները կամ կայանատեղիները, ինչը վտանգում է նրանց կյանքն ու առողջությունը, սահմանափակվում է նրանց սոցիալական ինտեգրացիան ու զարգացումը: Հետևաբար, այս հարցի լուծումը շատ կարևոր է ինչպես երեխաների ֆիզիկական առողջության, այնպես էլ նրանց հասարակական զարգացման համար: Մեր առաջարկը վերաբերում է այնպիսի պուրակի կառուցմանը, որը չի լինի միայն խաղային տարածք, այլ նաև հասարակական կյանքի կենտրոն, որտեղ երեխաները կարող են սովորել, խաղալ և միասին ստեղծել հիշողություններ, իսկ*	*Մերժվել է*	Տվյալ տարածքի ոչ խիտ բնակեցվածության և շահառուների քիչ քանակի պատճառով

		մեծահասակները՝ անցակցնել իրենց ազատ ժամանակը: Առաջարկում ենք պուրակը կառուցել ք. Թալին, Մյասնիկյան 3 հասցեի հարակից համայնքապատկան տարածքում: Մենք համոզված ենք, որ այս նախագիծը կլուծի մեր համայնքի առաջնային կարիքներից մեկը և կնպաստի մեր քաղաքի բնակիչների առողջությանը, բարեկեցությանը և կյանքի որակին:		
4	**Թալին քաղաքում կամուրջների ամրացման և հետիոտնային անցումների կառուցում**	*Առաջարկում եմ քաղաքացիների անվտանգ տեղաշարժը ապահովելու նպատակով իրականացնել Կոմիտաս և Բարեկամության փողոցների վրա գտնվող կամուրջների ամրացման և հետիոտնային անցումների կառուցման աշխատանքներ:*	*Ընդունվել է*	
5	**Բժշկության արդիական մարտահրավերները և հնարավոր լուծումները**	*Արագածոտնի մարզի Աշնակ գյուղում չկան անհրաժեշտ միջոցներ որակյալ բուժսպասարկում ապահովելու համար: Գյուղում ունենք ոչ բարեկարգ վիճակում գտնվող բուժկետ և ցանկանում ենք բուժկետը վերանորոգել, ունենք սարքավորումների, դեղորայքի պակաս: Այս բոլորը խոչընդոտ է, որպեսզի անհրաժեշտության պահին համայնքի բնակիչները ստանան անհրաժեշտ բուժօգնություն: Բուժկետի վերանորոգումը թույլ կտա ապահովել համապատասխան հիգիենիկ պայմաններ և նվազեցնել վարակների տարածման ռիսկը: Ժամանակակից դիզայնը և գունային լուծումները նպաստելու են անձնակազմի և հիվանդների հոգեբանական բարեկեցությանը: Վերանորոգման միջոցով հնարավոր է վերափոխել տարածքը՝ այն ավելի ֆունկցիոնալ դարձնել: Բժշկական հաստատության աշխատանքի արդյունավետության և բնակչության համար մատչելի ու որակյալ բուժսպասարկում ապահովել*	*Ընդունվել է*	
6	**Սահադաշտի կառուցում թալին բնակավայրում**	*«Թալինն ումից է պակաս, օր սահադաշտ չունենա» այս թևավոր խոսքը գյումրեցիներինս է, ապրելով Թալին բնակավայրում, առաջարկում եմ կառուցել սահադաշտ, որը կնպաստի ձմեռային ժամանցի հետաքրքիր*	*Մերժվել է*	***1.Չի համապատասխանում ավագանու սահմանած***

		կազմակերպմանը: Նպատակը մեկն է ցույց տալ, որ փոքր համայնքներում էլ է հնարավոր կյանքը աշխուժացնել, կազմակերպել ձմեռային խաղեր, ցուցահանդես_տոնավաճառ, սառցե շոու: Հույս ունեմ որ անտարբեր չեք լինի և առաջարկը ձեր 💚 _ի շնորհիվ կյանքի կկոչվի:		***առաջնահերթություններին 2.Տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել***
7	**Ցամաքասար համայնքում Ֆուտբոլի դաշտի կառուցում և բազմաֆունկցիոնալ խաղահրապարակի ստեղծում**	*Համայնքի առկա հողատարածքը վերածել բազմաֆունկցիոնալ սպորտային դաշտի, որը կծառայի ֆուտբոլի, բասկետբոլի և վոլեյբոլի համար: Տարածքում տեղադրվելու են նստարաններ և ծառեր՝ բնակիչների հանգստի համար*	*Ընդունվել է*	
8	**Աշնակ բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում**	*Աշնակ բնակավայրն ունի 6-35 տարեկան 350 բնակիչ: Երեխաների և երիտասարդների ժամանցը ապահովելու,սպորտային կյանքը զարգացնելու նպատակով առաջարկում են Աշնակ բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում:*	*Ընդունվել է*	
9	**Խաղահրապարակի կառուցում Արագածավան բնակավայրում**	*Երկաթուղայինների թաղամասում, երեխաների համար խաղահրապարակի բացակայությունը խոչընդոտում է նրանց լիարժեք ժամանցին: Երկաթուղային ռելսերն ու մայրուղին , ինչպես նաև համայնքի կենտրոնից հեռավորությունը, դժվարացնում են երեխաների հասանելիությունը այլ խաղահրապարակի :Համայնքապետարանը պաշտոնապես տրամադրել է տարածքը ,որպես խաղահրապարակ ,այն մաքրել է աղբանոցից:Այս հասանելի և հիանալի տարածքը ՝25\25 մակերեսով, թաղամասում կդառնա իրական հրաշք փոքրիկների համար ,համայնքապետարանի աջակցությամբ: Խաղահրապարակը ապահովելու է անվտանգ ու զարգացնող միջավայր: Շնորհակալություն:*	*Ընդունվել է*	
10	**Կաքավաձոր բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում**	Կաքավաձոր բնակավայրում չկա համապատասխան տարածք, որտեղ կարող են երեխաներն և մեծահասակները զբաղվել սպորտով: Որևէ մեկի համար գաղտնիք չէ, որ անկախ տարիքից շատերի սիրելի մարզաձևը	*Ընդունվել է*	

		ֆուտբոլն է: Սակայն ներկայիս ֆուտբոլի դաշտին տրամադրված տարածքը գտնվում է անմխիթար վիճակում, ինչի պատճառով հնարավոր չէ կազմակերպել որևէ մարզական միջոցառում կամ խաղ: Ֆուտբոլի դաշտ ունենալը կնպաստի՝ 1. Որպեսզի տղաները և աղջիկները ֆուտբոլով ավելի լուրջ զբաղվեն, որը կխթանի մարզաձևի զարգացմանը դեռահասների և երիտասարդների շրջանում (նշենք, որ համայնքում նաև գործում է աղջիկների ֆուտբոլի թիմ) 2. Բազմաթիվ ֆուտբոլային և, առհասարակ, մարզական միջոցառումների կազմակերպմանը, ինչը կկարողանա միավորել տարբեր համայնքներ՝ նպաստելով նաև տուրիզմի զարգացմանը: 3. Կօգնի, որ համայնքի բնակիչների ժամանցն ավելի հետաքրքիր և հագեցած ձեւով կազմակերպվի: Սպորտը առողջություն է, իսկ ֆուտբոլը մեծ մասսայականություն ունեցող մարզաձև է, հետևաբար շատ կարևոր է, որ նպաստենք վերջինիս զարգացմանը մեզ հարազատ միջավայրում, իսկ դրա համար առաջին հերթին գեղեցիկ և անվտանգության պայմաններին համապատասխան ֆուտբոլի դաշտ ունենալն է:		
11	**Արտենի բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում**	Արտենի բնակավայրի «Առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի հարակից տարածքում առաջարկում ենք կառուցել մինի-ֆուտբոլադաշտ: Ֆուտբոլադաշտի կառուցմամբ նպատակ ունենք բնակավայրում խթանելու երիտասարդների ակտիվ ու առողջ կենսակերպը: Երիտասարդների ֆիզիկական դաստիարակության առաջնային խնդիրը կայանում է նրանց ֆիզիկական պատրաստվածության պահանջների կատարման մեջ: Հաշվի առնելով երիտասարդների շարժողական պատրաստվածության դինամիկան տարբեր տարիքային փուլերում՝ անհրաժեշտ ենք համարում ստեղծել այնպիսի միջոցներ, որոնցով կնպաստենք երիտասարդների ֆիզիկական պատրաստվածության բարձրացմանը, ինչպես նաև կապահովենք երիտասարդների ժամանցը և կզարգացնենք սպորտային կյանքը:	*Ընդունվել է*	

12	**Ներքին բազմաբերդ բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում**	1960- ական թվականներից մինչ այսօր ֆուտբոլը Ներքին Բազմաբերդ բնակավայրում դարձել է պատանիների և երիտասարդների սիրած սպորտաձևերից մեկը: Խաղահրապարակ չունենալու պատճառով բազմաբերդցիները ֆուտբոլ խաղում էին ցորենքաղից հետո ծղոտով լցված արտերում, և միայն 1991 թվականին հատկացվեց գերեզմանոցին կից տարածք՝ ֆուտբոլ խաղալու համար : Ներքին Բազմաբերդ բնակավայրի բնակիչների ցանկությունն է, որ ունենան բարեկարգ խաղահրապարակ, որպեսզի այնտեղ անցկացնեն ֆուտբոլային խաղեր: Ներկա և ապագա սերունդների համար այն դարձնեն սպորտային միջոցառումների անցկացման վայր՝ բարձր պահելով երբեմնի փառքի արժանացած Բազմաբերդ գյուղի և իր ֆուտբոլային թիմի երախտավորների պատիվը:	*Ընդունվել է*	
13	**Ագարակավան բնակավայրի մշակույթի տան վերանորոգում**	Մեր խնդրանք-առաջարկն է վերանորոգել Ագարակավան բնակավայրի մշակույթի տունը:	*Ընդունվել է*	